

ՀՀ բանկային համակարգի 2013 թ-ի տարեկան, այդ թվում՝ չորրորդ եռամսյակի գործունեության ամփոփում

Ինչպես 2013 թ-ի չորրորդ եռամսյակի, այնպես էլ հաշվետու տարվա ընթացքում համակարգը գործել է արդյունավետ՝ ապահովելով գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով համեմատական բարձր աճ: Հաշվետու տարվա ընթացքում համակարգի մաքուր շահույթը կազմել է մոտ 49.8 մլրդ դրամ, վնասը՝ 1.8 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը՝ 48.0 մլրդ դրամ, այդ թվում՝ չորրորդ եռամսյակում համակարգի մաքուր շահույթը կազմել է մոտ 13.17 մլրդ դրամ, վնասը՝ 424.8 մլն դրամ, իսկ զուտ շահույթը՝ 12.74 մլրդ դրամ:


Ընդհանուր ակտիվներ

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2013 թ-ի չորրորդ եռամսյակի ընթացքում աճել են 8.1 %-ով կամ 221.5 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 2,941.0 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ակտիվներն աճել էր 5.1 %-ով կամ 116.8 մլրդ դրամով: Հաշվետու տարվա ընթացքում համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել են 21.9 %-ով կամ 528.9 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ 2012 թ-ի ընթացքում համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել էր 16.3 %-ով կամ 338.1 մլրդ դրամով:


Վարկային ներդրումներ

Հաշվետու եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 3.8 %-ով կամ 68.1 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 26.6 %-ով կամ 46.7 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել համապատասխանաբար 1,854.2 և 222.2 մլրդ դրամ, ընդ որում՝ հաշվետու տարվա երրորդ եռամսյակում վարկային ներդրումներն աճել էր 0.6 %-ով կամ 10.9 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 1.3 %-ով կամ 2.4 մլրդ դրամով: Վերոնշյալին նաև ավելացնենք, որ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում վարկային ներդրումներն աճել էր 3.5 %-ով կամ 55.1 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 9.1 %-ով կամ 14.1 մլրդ դրամով: Միևնույն ժամանակ նշենք, որ հաշվետու տարվա ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 14.4 %-ով կամ 233.8 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 31.7 %-ով կամ 53.5 մլրդ դրամով, ընդ որում՝ հաշվետու տարվան նախորդող տարվա (այսուհետ՝ նախորդ տարվա) ընթացքում վերոնշյալ ցուցանիշները ավելացել էին համապատասխանաբար՝ 21.2 %-ով կամ 283.1 մլրդ դրամով և 25.6 %-ով կամ 34.3 մլրդ դրամով: 2013-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 63.0 %-ը, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերի բաժնենասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 64.3 %-ը կամ 1,192.8 մլրդ դրամ, և վերոնշյալ ցուցանիշը չորրորդ եռամսյակի ընթացքում աճել է 4.7 %-ով կամ 53.8 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 2.8 %-ի կամ 29.0 մլրդ դրամի դիմաց: Հաշվետու տարում տնտեսությանը տրված վարկերն ավելացել են 13.8 %-ով կամ 144.6 մլրդ դրամով, իսկ նախորդ տարվա ընթացքում ավելացել էին 19.0 %-ով կամ 167.3 մլրդ դրամով: Շարադրվածին միայն հավելենք, որ հաշվետու տարվա երրորդ եռամսյակում տնտեսությանը տրված վարկերն ավելացել էին մոտ 1.1 %-ով կամ 12.1 մլրդ դրամով:

2013 -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ
վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)



Ֆիզիկական անձանց տրված վարկերը 2013 -ի չորրորդ եռամսյակի ընթացքում աճել են 5.7 %-ով կամ 32.0 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 592.9 մլրդ դրամ, ընդ որում՝ հաշվետու տարվա երրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել էր 2.0 % կամ 10.8 մլրդ դրամ: Համադրելու համար նշենք, որ նախորդ տարվա չորրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց վարկերի ծավալն աճել էր 5.9 %-ով կամ 27.5 մլրդ դրամով: Միաժամանակ նշենք, որ հաշվետու տարվա ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերն աճել են 21.1 %-ով կամ մոտ 103.2 մլրդ դրամով, որը նախորդ տարվա նույն ցուցանիշին գերազանցել է 1.3 %-ով կամ մոտ 1.3 մլրդ դրամով: Հաշվետու եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 32.0 %-ը, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 20.9 %-ը կամ 386.9 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 7.8%-ը կամ 143.9 մլրդ դրամ: Հաշվետու եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալն աճել է 6.1 %-ով կամ 22.1 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերինը՝ 3.5 %-ով կամ մոտ 4.9 մլրդ դրամով, ընդ որում՝ հաշվետու տարվա երրորդ եռամսյակում նշված ցուցանիշների համապատասխան աճերը կազմել էր 1.6 % կամ 5.8 մլրդ դրամ և 4.1 % կամ 5.5 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ 2012 թ-ի չորրորդ եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալն աճել էր 8.8 % կամ 25.9 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերի ծավալը նվազել 1.3 % կամ 1.6 մլրդ դրամ: Նաև նշենք, որ հաշվետու տարվա ընթացքում սպառողական վարկերի աճը կազմել է 20.2 % կամ 65.0 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերինը՝ 17.4 %-ը կամ 21.4 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա ընթացքում համանուն ցուցանիշների համապատասխան աճերը կազմել էր 28.9 % կամ 72.2 մլրդ դրամ և 9.8 % կամ 10.9 մլրդ դրամ:




Պարտավորություններ

2013-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 2,469.8 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 23.3 %-ով կամ 467.2 մլրդ դրամով: Միաժամանակ փաստենք, որ նախորդ տարվա ընթացքում պարտավորություններն աճել էր 17.9 %-ով կամ 303.7 մլրդ դրամով: Վերոնշյալ ցուցանիշը հաշվետու եռամսյակում աճել է 8.6 %-ով կամ 195.2 մլրդ դրամով, իսկ հաշվետու տարվա երրորդ եռամսյակում՝ 2.7 %-ով կամ 60.7 մլրդ դրամով: Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) հաշվետու եռամսյակի ընթացքում աճել են 6.4 %-ով կամ 55.2 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդներն՝ 17.4 %-ով կամ 103.4 մլրդ դրամով և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 912.6 և 697.4 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների եռամսյակային աճը կազմել է 5.4 % կամ 38.3 մլրդ դրամ, ցպահանջ ավանդներինը՝ 11.3 % կամ 17.0 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց ժամկետային ավանդներինը՝ 6.8 % կամ մոտ 19.4 մլրդ դրամ, ցպահանջ ավանդներինը՝ 27.4 % կամ 84.0 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ հաշվետու տարվա երրորդ եռամսյակում վերը նշված ցուցանիշներից ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել էր 4.1 %-ով կամ 34.1 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդներն աճել էր 5.4 %-ով կամ 36.2 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները նվազել 1.4%-ով կամ 2.1 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները նվազել էր 2.0 %-ով կամ 12.1 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդներն աճել էր 11.4 %-ով կամ 29.4 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները նվազել 11.9 %-ով կամ 41.5 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն աճել էր 7.2 %-ով կամ 49.4 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 7.7 %-ով կամ 42.5 մլրդ դրամով,


ցպահանջ ավանդները՝ 5.1 %-ով կամ 7.0 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները նվազել էր 5.2 %-ով կամ 27.2 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 3.9 %-ով կամ 10.3 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 6.6 %-ով կամ 17.0 մլրդ դրամով:

Հաշվետու տարվա ընթացքում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել են 24.1 %-ով կամ 177.3 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 25.8 %-ով կամ 152.7 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 17.2 %-ով կամ 24.5 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդներն աճել են 41.9 %-ով կամ 206.0 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 21.7 %-ով կամ 54.7 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 63.2 %-ով կամ 151.3 մլրդ դրամով: Համադրելու համար նաև նշենք, որ նախորդ տարում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել էր 31.6 %-ով կամ 176.8 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 36.4 %-ով կամ 158.1 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 15.0 %-ով կամ 18.7 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները նվազել էր 0.8 %-ով կամ 3.8 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ աճել էր 20.6 %-ով կամ 43.0 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ նվազել 16.4 %-ով կամ 46.8 մլրդ դրամով: Ասվածին միայն հավելենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց համախառն ավանդների) ծավալը հաշվետու եռամսյակի վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 65.2 %-ը:


Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը
2013 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (մլրդ դրամ)



Համակարգում ժամկետային ավանդների
փոփոխման դինամիկան




Համակարգում ցպահանջ ավանդների փոփոխման դինամիկան



Ընդհանուր կապիտալ

ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 5.9 %-ով կամ 26.3 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 471.2 մլրդ դրամ, ընդ որում՝ երրորդ եռամսյակում այն ավելացել էր 4.2 %-ով կամ 17.8 մլրդ դրամով: Հարկ է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա չորրորդ եռամսյակում ավելացել էր 4.1 %-ով կամ 16.3 մլրդ դրամով: Հաշվետու տարվա ընթացքում ընդհանուր կապիտալը աճել է 15.1 %-ով կամ 61.7 մլրդ դրամով՝ նախորդ տարվա 9.2 %-ի կամ 34.4 մլրդ դրամի դիմաց: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից կանոնադիր կապիտալը հաշվետու եռամսյակում աճել է 1.9 %-ով կամ 4.8 մլրդ դրամով, իսկ չբաշխված շահույթը (եկամուտների պահուստը)՝ 10.7 %-ով կամ 20.3 մլրդ դրամով և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 255.5 և 209.5 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 54.2 և 44.5 %-ը, ընդ որում՝ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում կանոնադիր կապիտալը աճել էր 0.5 %-ով կամ 1.2 մլրդ դրամով: 2013 թ-ի ընթացքում կանոնադիր կապիտալը աճել է 4.7 %-ով կամ 11.4 մլրդ դրամով, իսկ եկամուտների պահուստը՝ 23.1 %-ով կամ 39.3 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ նախորդ տարվա ընթացքում կանոնադիր կապիտալը աճել էր 4.4 %-ով կամ 10.2 մլրդ դրամով, իսկ եկամուտների պահուստը՝ 17.0 %-ով կամ 24.7 մլրդ դրամով:

Համակարգում կապիտալի և կուտակված շահույթի փոփոխման դինամիկան



Եկամուտներ եվ ծախսեր

Հաշվետու տարվա չորրորդ եռամսյակի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 99.0 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 82.3 մլրդ դրամ, ընդ որում՝ անցած տարվա չորրորդ եռամսյակի ընդհանուր եկամուտները կազմել էին 92.0 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 74.4 մլրդ դրամ: Տեղի է ունեցել, որ հաշվետու եռամսյակի ընդհանուր եկամուտները և ծախսերը նախորդ եռամսյակի ընդհանուր եկամուտներին և ծախսերին գերազանցել են համապատասխանաբար 11.2 %-ով կամ 10.0 մլրդ դրամով և 15.9 %-ով կամ 11.3 մլրդ դրամով: Ասվածին նաև հավելենք, որ հաշվետու տարվա ընթացքում համակարգում ապահովվել է 365.4 մլրդ դրամի եկամուտ և կատարվել 303.8 մլրդ դրամի ծախս, որոնք նախորդ տարվա համանուն ցուցանիշները գերազանցել են համապատասխանաբար 8.3 %-ով կամ 28.0 մլրդ դրամով և 7.5 %-ով կամ 21.3 մլրդ դրամով:


Շահույթ

ՀՀ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 12.74 մլրդ դրամ մաքուր շահույթ (շահութահարկը հանած), որը 2012 թ.-ի նույն ժամանակամիջոցում ապահոված մաքուր շահույթի ծավալին զիջել է 1.03 մլրդ դրամով: Նաև նշենք, որ հաշվետու տարվա ընթացքում համակարգում ապահովվել է մոտ 48.0 մլրդ դրամի մաքուր շահույթ՝ նախորդ տարվա 43.0 մլրդ դրամի դիմաց:

Ամփոփ ցուցանիշներ

2013-ի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 11.18 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 1.81 %: Պետք է արձանագրել, որ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության, ինչպես նաև ակտիվների շահութաբերության աճ անցած տարվա նույն ժամկետի համեմատ՝ ROE-ն աճել է 0.9 տոկոսային կետով, իսկ ROA-ն՝ 0.05 տոկոսային կետով:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները



2013 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական ցուցանիշներն՝ ըստ բանկերի,
դրանց աճը/նվազումն չորրորդ եռամսյակի ընթացքում և բանկերի գրաված տեղը համակարգում

Աղյուսակ 1.
(մլն դրամ)

Գ/Գ	Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում			
					Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույթ/ վնաս	Զբաշ. շահույթ IV-եռ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1	ԱԿԲԱ Բանկ	267828,6	1,5	4	181047,9	-2,8	213556,6	1,2	4	53029,3	-13,5	54272,0	2,7	1	30000,0	0,0	15429,9	1196,5
2	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ	249423,6	9,5	5	160829,2	13,6	208142,5	11,5	6	55885,7	6,7	41281,1	0,1	3	18434,4	0,0	20085,8	1621,7
3	Արդշինհիմնվեստբանկ	270866,4	3,4	3	179017,6	8,8	226666,4	2,3	3	70926,2	9,4	44200,0	9,4	2	15513,6	0,0	22462,5	2370,9
4	ՎՏԲ Հայաստան Բանկ	299720,0	3,0	2	227140,5	6,8	262201,4	2,6	2	84595,5	8,4	37518,5	5,3	5	13906,2	0,0	18281,1	879,2
5	Կոնվերս Բանկ	121686,9	1,9	11	83981,9	3,5	101775,2	-0,5	11	35663,8	5,1	19911,7	16,0	12	4923,3	0,0	8735,6	235,2
6	Յունիբանկ	154207,4	-5,0	8	115555,3	8,1	132874,5	-7,0	8	78300,3	3,3	21332,9	9,9	10	13100,7	14,9	7645,8	161,2
7	Հայէկոնոմբանկ	74195,5	5,5	13	41472,1	-0,7	63098,4	5,0	13	18723,9	9,8	11097,1	8,5	16	2333,3	0,0	2287,8	69,2
8	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	315048,1	6,2	1	173634,4	6,8	276249,1	7,2	1	67804,6	9,6	38799,0	-0,5	4	25476,3	0,0	12905,2	1536,8
9	Ինեկոբանկ	130595,0	5,7	9	88455,2	6,4	107125,9	5,2	9	22767,1	10,0	23469,0	7,8	7	7894,4	0,0	11934,9	1276,0
10	Հայքիզնեսբանկ	220047,2	16,8	7	128509,2	1,1	195295,4	17,7	7	64132,3	7,5	24751,8	10,2	6	17500,0	0,0	5347,1	927,7
11	Անեյիթ Բանկ	60028,9	-1,2	17	38787,3	13,7	46958,8	-0,9	16	24955,7	7,0	13070,2	-2,2	15	14300,0	0,0	-1493,7	-303,1
12	Առեկսիմբանկ	233541,7	48,2	6	96155,1	-3,8	212129,1	55,7	5	30310,9	0,9	21412,6	0,3	9	16452,1	0,0	4593,0	62,9
13	Արցախբանկ	89976,5	-1,2	12	62448,8	-1,4	76323,1	-2,0	12	19017,5	12,7	13653,5	3,5	14	6561,2	0,0	4924,1	529,1
14	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	125250,2	19,0	10	84675,0	-3,2	105603,8	22,1	10	22170,1	0,1	19646,4	4,7	13	8335,4	0,0	10164,7	696,2
15	ԱրմսվիսԲանկ	69867,6	18,7	15	28749,3	-2,6	48710,3	8,4	15	6648,3	16,3	21157,3	52,1	11	10100,0	44,2	4733,9	643,4
16	Զարգ. Հայկական Բանկ	70041,4	14,5	14	43851,8	2,4	60840,6	15,8	14	40818,3	7,9	9200,8	6,3	18	4556,7	0,0	4277,1	544,3
17	Պրոմթեյ Բանկ	62828,1	11,0	16	31750,2	-7,0	40763,8	15,7	18	15192,5	15,0	22064,2	3,1	8	14400,0	0,0	7131,7	306,1
18	Բիբլոս Բանկ Հայաստան	42615,5	0,0	19	30417,6	-7,7	33636,4	-0,2	19	17225,3	3,7	8979,2	0,8	19	8382,2	0,0	355,7	-106,6
19	ԲՏԱ Բանկ	11505,7	-15,1	21	6973,2	-4,9	5778,2	-26,3	21	3389,0	15,3	5727,5	0,3	21	6520,0	0,0	-882,2	-15,1
20	Պրոկոնեդիտ Բանկ	52793,4	8,5	18	44209,7	11,5	44128,2	10,2	17	13631,3	7,9	8665,2	0,9	20	9990,0	0,0	-1324,8	73,9
21	Մելլաթ Բանկ	18980,4	6,0	20	6553,5	-10,0	7983,7	14,8	20	50,7	0,0	10996,7	0,4	17	6850,0	0,0	3885,2	41,7
	Ընդամենը	2941048,1	8,1		1854214,8	3,8	2469841,4	8,6		745238,3	5,4	471206,7	5,9		255529,8	1,9	161480,4	12747,2